ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 23 » 04 2025թ. ք. Երևան № 126-Ա

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 248-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 34.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2025 թվականի ապրիլի 17-ի «Մուշեղ Բաբայանին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնից ազատելու մասին» N 315-Ա որոշումը

Հրամայում եմ՝

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամներին նշանակելու և անհատական կազմը սահմանելու մասին» թիվ 248-Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում «Մուշեղ Բաբայանին» բառերը փոխարինել «Էդիկ Հակոբյանին» բառերով:
2. Սահմանել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն կից հավելվածի:
3. Անձնակազմի կառավարման վարչության պետին՝ սույն հրամանը ծանոթացնել Հանձնաժողովի անդամներին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական՝

23.04.2025

X

Ա. Ա. Նահապետյան

Подписано: NAHAPETYAN ARTUR

Հավելված
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025թ. ապրիլի 23-ի թիվ 126 -Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ	**Էդիկ Հակոբյան** Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ *(որպես Կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամ նշանակվել է 2 տարի ժամկետով՝ մինչև 27.09.2025թ. ներառյալ)*
2) Վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի ներկայացուցիչ	**Գևորգ Քոչարյան** Արդարադատության նախարարի տեղակալ *(որպես Կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամ նշանակվել է 2 տարի ժամկետով՝ մինչև 27.09.2025թ. ներառյալ)*
3) Վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի ներկայացուցիչ	**Եփրեմ Կարապետյան** Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ *(որպես Կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամ նշանակվել է 2 տարի ժամկետով՝ մինչև 27.09.2025թ. ներառյալ)*
4) Գլխավոր դատախազության ներկայացրած դատախազ	**Կորյուն Սերոբյան** ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ *(նշանակվել է 3 տարի ժամկետով՝ մինչև 28.09.2027թ. ներառյալ)*
5) Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած ներկայացուցիչ	**Էդգար Մարտիրոսյան** Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության պետ *(որպես Կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամ նշանակվել է 2 տարի ժամկետով՝ մինչև 27.09.2025թ. ներառյալ)*
6) Իրավաբան գիտնական	**Գագիկ Գրիգորյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ *(որպես Կարգապահական հանձնաժողովի առաջին կազմի անդամ նշանակվել է 2 տարի ժամկետով՝ մինչև 27.09.2025թ. ներառյալ)*

7) Հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող քննիչ	**Գագիկ Համբարձումյան** Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ *(նշանակվել է 3 տարի ժամկետով՝ մինչև 28.09.2027թ. ներառյալ)*
8) Հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող	**Անուշ Վահանյան** Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության երկրորդ բաժնի օպերլիազոր *(նշանակվել է 3 տարի ժամկետով՝ մինչև 28.09.2027թ. ներառյալ)*